դէր, և համարձակ հրապարակէր զգաղտնի դաւադրութիւնս Ցունաց. պատրաստ եմք ասէր 'ի բանս և 'ի մահ, և ոչ դադարիմք 'ի թախանձելոյ զարդարասէր Թագաւորն, զի գթած է նա և ողորմած. և իրաւամբ տնօրինէ զիրաւունս մեր, և այլ սոցին նման բանք բազում իբրեւ ժամս 2, զի փոխանակ Ցունաց նոքա հակառակէին Հայոց, և Պէյլիքճին իսկ ասէր, հնար է զերկուս ձեռս հատանել, քան զարձանագրութիւնս Ցունաց ջնջել. զորոյ զգլուխն իսկ եբարձ Արքայ զկնի աւուրց, սակս ինչ ինչ պատճառաց. և Հայք մեկնեցան 'ի տեղիս իւրեանց։ Բէիզ էֆէնտին կամեցեալ երկիւղ ինչ արկանել 'ի միտս Հայոց, կոչեաց առ ինքն զմին յերեւելեաց և ասէ՝ մի՛ հետեւիք բանից Փոխանորդին ձերոյ, զի մեծամեծ ինաստուց տայ պատահել ձեզ։ Ցետ աւուրց ինչ ըստ ծանուցման Բէիզ էֆէնտեայ՝ վերստին չոքան առ նա 'ի տուն Նորին երկոքին Պօղոս վարդապետք, ուր մանրախոյզ քննութեամբ տեղեկանայր ամենայն անցիցն զոր անցուցին Ցոյնք ընդ Հայս։ Ցայնժամ 'ի միտ առ այրն, թէ վեցն օր քան զօրունի սաստկանալ, եթէ ոչ լիցի արդար դատաստան 'ի մէջ երկուց ազգաց։

Եւ 'ի ծանուցանելն զայս ամենայն Արքայի՝ էլ հրաման լինել դատաստան 'ի Փաշա Գաբուսի կոչեցեալ տեղին, և Կայսերական հրամանաւ կարգեցան Դատաւորք՝ 'ի գիտնականաց դասէ՝ Էմին Պէկ, Ֆէթվա Էմինի, Թահիր եւ Գասըմ Էֆէնտիք։ Ի Նախարարաց կարգէ, Բէիզ Էֆէնտի, Ազիզ և Եուսուֆ Ակեայ Էֆէնտիք։ Եւ Հայք ընտրեցին 'ի կողմանէ իւրեանց Ազնաւորեան Քեահեայ Կարապետ Ամիրայ, Ցովհաննէս Զէլէպի Ցարութեան, Զէրէզեան Գրիգոր, Տատ Վառօդապետ, Գլճեան Անտոն, Թնկրեան Մինաս, և Պօղոս վարդապետ Փոխանորդ Երուսաղէմի. սոքա գնացին բազմութեամբ 'ի Հասան Փաշա խանն մերձ 'ի Դուռն Փաշայի, եկն անդ եւ Ցովհաննէս Պատրիարք Կոստանդինուպօլսոյ։

Իսկ 'ի կողմանէ Ցունաց եկին Երասիմոս եպիսկոպոս Առաջնորդ Թեսաղոնիկեայ, Առաջնորդն Իկոնիոյ, Մեթոդիանոս վիճարան Երուսաղէմի, և այլ երկու անձինք յիշխանաւորաց նոցին։ Սոքա ամենեքեան իբրեւ Երեսփո-